ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

«Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում» թեմայով Արմեն Մարտիրոսյանի ատենախոսության վերաբերյալ՝ Ը.00.02 — «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինստիտուցիոնալ էկոնոմիկան, թերևս, ժամանակակից տնտեսագիտության այն հատվածն է, որը զարմանալիորեն սակավ է ներկայացված հայաստանյան գիտնականների աշխատություններում: Մինչդեռ մեր երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, հանրային և՛ զարգացման, և՛ ձախողումների հիմքում առավելապես ընկած է հենց ինստիտուցիոնալ էկոնոմիկայի օրինաչափությունների և պատճառահետևանքային կապերի անտեսումը: Սա զարմանալի երևույթ է, քանի որ Հայաստանի Հանրապետությունը, որի հիմքում հայ էթնոսն է՝ իր հարուստ պատմամշակութային, միայն իրեն բնորոշ արժեհամակարգային, քաղաքակրթական առանձնահատկություններով պիտի լիներ առաջիններից մեկը, որ կփորձարկեր և կօգտագործեր ժամանակակից տնտեսագիտության բազմաբովանդակ զինանոցը՝ առաջընթացի

հետազիծը որոշելիս, այդ մինչ այժմ չփորձարկված ու դժվարին ճանապարհի վրա պարբերաբար առաջացող խութերի շրջանցման օպտիմալ լուծումները որոնելիս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս իմաստով Արմեն Մարտիրոսյանի ատենախոսությունն առավել քան արդիական է, ներկայանում է որպես փիլիսոփայական և մաթեմատիկական առաջադեմ գիտական նվաճումների վրա հիմնված, իր բնույթով եզակի գիտական աշխատություն, որում գիտության տարբեր ասպարեզների՝ ինստիտուցիոնալ էկոնոմիկայի, կիբերնետիկայի, մշակութային փոփոխությունների տեսության, գիտելիքի աճի տեսության, նաև վարքագծային էկոնոմիկայի սինթեզի հիման վրա դուրս են բերվում երկրի կառավարելիության աստիճանի բարձրացման, մինչ այժմ անտեսված սոցիոմշակութային գործոնների վերլուծության հիման վրա դրանց դրական ազդեցության աքսելերացման և բացասական ազդեցության վնասազերծման բանաձևերը. երկրի զարգացման ստրատեգիական նպատակները դիտարկվում են միջազգայնորեն ընդունված կայուն զարգացման չափանիշների կոնտեքստում՝ առանձնահատուկ թիրախ ընտրելով էկոլոգիական բաղադրիչը. կառուցված է մշակութային բարենպաստության ինդեքսը՝ որպես երկրի ինստիտուցիոնալ և մշակութային համակարգերի վիճակի ախտորոշման համապարփակ ցուցանիշ, որի գործադրմամբ բերված է տարբեր երկրների՝ ՄԱԿ-ի կողմից հաստատված կայուն զարգացման նպատակներին հասանելիության տարբեր աստիճանների հիմնավորումը. ապացուցվում է պետու-

թյան կողմից հաստատվող կրթական քաղաքականության առաջնահերթությունների մեջ մշակութային գործոնի կարևորությունը, արվում են կոնկրետ առաջարկներ նշված գործոնի կիրառման ուղղությամբ. տարածաշրջանային գալիք զարգացումների և ինտեգրման իմպերատիվը վերլուծելիս մշակութային զանազանությունը դիտարկվում է ոչ թե որպես ինտեգրման խոչընդոտ, այլ հակառակը՝ որպես խթան և ինտեգրման սիներգետիկ առավելությունները կիրառելու ռեսուրս. տցիոմշակութային ոլորտն իր ամբողջության մեջ դիտարկվում է ոչ թե որպես միջավայր, այլ որպես պետական կառավարման օբյեկտ, որի ընդգրկումը կառավարման ռազմավարության մեջ էապես բարձրացնում է կառավարման արդյունավետությունը՝ ներառյալ կայուն զարգացման նպատակներին հնարավորինս կարճ ժամանակում հասնելու հնարավորությունը: Նշված բոլոր կետերն անտարակույս գիտական նորույթ են հանդիսանում՝ հարստացնելով ոչ միայն գիտության տեսական հատվածը, այլ նաև առարկայական, պրակտիկ առաջարկություններ ներկայացնելով երկրի զարգացման ստրատեգիական ուղենիշների առնչությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինակի կողմից գիտական հետազոտության առարկայի նկատմամբ նման ինտեգրալ մոտեցումը թույլ է տալիս հաղթահարել այն հակասություններն ու խնդիրները, որոնք առկա են, մասնավորապես, Դարոն Աճեմօղլուի աշխատություններում, ներառյալ Ջեյմս Ռոբինսոնի

համահեղինակությամբ լույս տեսած իր ամենահայտնի՝ «Ինչու են ձախողվում պետությունները. իշխանության, բարեկեցության և աղքատության ակունքները» (Why Nations Fail: The Origins of Power, Prosperity, and Poverty) գրքում: Աճեմօղլուն ակնհայտորեն թերագնահատել է երկրների և ժողովուրդների մշակութային, արժեհամակարգային, վարքագծային առանձնահատկությունները՝ առանձին երկրների ձախողումները կամ հաջողությունները բացատրելով զուտ ինստիտուցիոնալ կառույցների համապատասխան զարգացման աստիճանով: Այնպիսի օրինակները, ինչպիսին են Սինգապուրը (իր երբեմնի ավտորիտար կառավարման համակարգով), Հարավային Կորեյան (իր մեծամասամբ ընտանեկան, կլանային առաջնահերթություններով), Պարսից ծոցի արաբական երկրները (իրենց առանձնահատուկ հոգևոր-մշակութային և վարքագծային կանոններով), Չինաստանը (իր բազմադարյա բացառիկ մշակութային կոդով)՝ հերքում են Աճեմօղլուի հիմնական թեզն առ այն, որ երկրների՝ զարգացվածության տարբեր աստիճաններում գտնվելու պատճառը զուտ ներառական ինստիտուտների զարգացվածության աստիճանների տարբերությունն է: Համաշխարհային ներկայիս գործընթացների ուսումնասիրումը բերում է այն եզրակացության, որ հարստանում և բարգավաճում են այն երկրները, որոնք խրախուսում են ինվեստիցիոն ակտիվությունը (այսինքն՝ ուղղությունը դեպի երկրից ներս), և թերզարգացած են մնում այն երկրները, որոնք նպատակադրված են առավելագույնը քաղելու առկա բնական, աշխարհագրական և մարդկային ռեսուրսներից և արդյունքը տեղաբաշխելու

այլ տիրույթներում (այսինքն՝ ուղղությունը դեպի երկրից դուրս): Վերջիններիս առանձնահատկությունն է էքստրակտիվ, ճնշողական, հարկադրային պետական ինստիտուտների առավել արագ զարգացումը, առկա բնական ռեսուրսների փակ տեղեկատվական համակարգի հաստատումը, բնական պաշարների հետագա հետազոտման և շահագործման հնարավորությունների սահմանափակումը հենց նույն փակ համակարգի գործադրման միջոցով:

Հայաստանի դեպքը, ցավոք, հենց սա է, և հեղինակը՝ օգտագործելով համաշխարհային գիտության գործիքակազմից ամենաարդիական գործիքները, գալիս է բացարձակ ճշգրիտ եզրահանգման. «Կայուն զարգացման գլխավոր խոչընդոտը ռեսուրսների սղությունը չէ, այլ կառավարելիության կառուցվածքային դեֆիցիտը», որի լրացման համար առաջարկվում է զարգացման ինստիտուցիոնալ, կրթական և մշակութային բաղադրիչների համադրմամբ ինտեգրալ օպտիմալ մոդելի կիրառում, ինչը ևս նորույթ է մեր տնտեսագիտական աշխատությունների համար:

Խորհրդային Միության փլուզման արդյունքում առաջացած նորանկախ պետությունները, համակարգային տրանսֆորմացիայի տեսանկյունից գտնվելով գրեթե հավասար ստարտային պայմաններում, տասնամյակներ անց այնուամենայնիվ հայտնվեցին տրամագծորեն տարբեր իրավիճակներում՝ չնայած որ Արևմտյան համակարգերի կողմից բոլորի համար դուրս գրված ինստիտուցիոնալ տրանսֆորմացիոն «դեղատոմսերը» նույնն էին: Շատ դեպքերում տեղի ունեցավ ան-

գամ Լեոնիդ Պոլտերովիչի նկարագրած «ինստիտուտների տրանսպլանտացիան»՝ երբ Արևմտյան համակարգերում փորձարկված ինստիտուտներն ուղղակի կուրորեն տեղափոխվեցին նորանկախ պետությունների տիրույթ՝ առանց դրանց պատմական և սոցիալ-մշակութային առանձնահատկությունները հաշվի առնելու: Արդյունքում, բնականաբար, հիմնականում տեղի ունեցավ այդ ներմուծված և երկրների սոցիալ-մշակութային ինքնությանը խորթ ինստիտուտների լավագույն դեպքում՝ մերժումը, իսկ առավել խորտակիչ դեպքերում՝ փոխակերպումը դրանց էությանը հակառակ միավորների: Նշված երկրները, ներառյալ Հայաստանը, չանսացին անգամ նույն Պոլտերովիչի առաջարկած լուծմանը՝ ստեղծել ժամանակավոր, ադապտացիոն, միջանկյալ ինստիտուտներ՝ պետական կառավարման համակարգերին և այդ համակարգերի կողմից կառավարվող սոցիումին տրանսֆորմացիոն ողջամիտ ժամանակ տրամադրելու նպատակով: Արմեն Մարտիրոսյանի կողմից ստեղծված և այս աշխատության մեջ ներկայացված, համապատասխան չափերով կշռված սոցիալ-մշակութային պարամետրերի հաշվառմամբ կառավարման մոդելը լուծում է նշված ժամանակային կորստի խնդիրը. կառավարման մոդելը կարող է ի սկզբանե ամբողջությամբ համապատասխանեցվել տվյալ երկրի սոցիալ-մշակութային առանձնահատկություններին:

Ատենախոսության մեջ հատուկ ուշադրության են արժանի Հայաստանի և հայ սոցիումի մշակութային ինքնությանը վերաբերող այնպիսի կարևորագույն բաղադրիչներ, ինչպիսին են Լեզուն և Հավատքը:

Լինգվիստիկայի՝ որպես գիտություն հիմնադիրներից մեկի, գերմանացի հանրահայտ գիտնական Վիլհելմ Հումբոլդտի բնութագրմամբ՝ լեզուն է ձևավորում ժողովրդի աշխարհայացքը և մտածողությունը: Արդեն մեր ժամանակներում նեյրոլինգվիստիկայի զարգացումը բերեց նոր կարևոր բացահայտումների. լեզուն ձևավորում է մտածողությունը, իսկ մշակութային միջավայրը ձևավորում է ուղեղի կառուցվածքն ու ճարտարապետությունը: Մեր լեզուն անասելի ճկուն ու բեղուն է, նոր բառերը ձևավորվում են շարադրությանը ընթացքին զուգահեռ, հայերենը մշտական զարգացման, հարստացման ու կատարելագործման ընթացքում է գտնվում, լեզվի ճկունությունը կարծես թե թելադրում է նաև գործողությունների մեջ ճկունություն, լայն մտահորիզոնի առկայություն, առաջընթացի բազմաթիվ տարբերակների բացահայտում և համադրում: Իրականությունը, սակայն, այդպիսին չէ, և ատենախոսության մեջ ես կուզեի տեսնել մեր երկրի և հասարակության համատեքստում Լեզվի գործոնի (ներառյալ արևմտահայերենը) առավել մանրակրկիտ ուսումնասիրություն:

Նույնը վերաբերում է և հոգևոր հատվածին, որի գործադրումը կամ անտեսումը նույնպես կարող են էապես փոխել կամ շեղել օպտիմալ կառավարման մոդելավորման ընթացքը: Մաքս Վեբերի բացահայտմամբ՝ հոգևոր և/կամ կրոնական արժեքները էական գործոն են հանդիսանում հանրության և դրա առանձին անդամների տնտեսական վարքագծի և կառավարման համակարգերի ինստիտուցիոնալ զարգացման հարցում: Մաքս Վեբերը գալիս է այն եզրակացության, որ քրիստոնյա

բողոքականներն առավել մեծ վստահություն են դրսևորում ֆորմալ ինստիտուտների նկատմամբ: Ընդհանրապես, վստահության գործոնը «տնտեսական արդյունավետության անկյունաքարային դետերմինանտն է» (Ֆրենսիս Ֆուկույամա): Ատենախոսության մեջ մանրամասնորեն նկարագրվում է հոլանդացի հանրահայտ սոցիալական հոգեբան Գերտ Հոֆստեդեի մշակութային չափագրումների տեսությունը, որի կիրառմամբ Հայաստանը բնութագրվում է որպես իշխանության և հասարակության միջև առկա մեծ տարածության տիրույթ: Եզրակացությունը ճշմարիտ է, սակայն դրա բացատրությունը՝ ոչ հիմնովին: Մեր կարծիքով, հասարակության զգալի հատվածի օտարումը իշխանության մարմիններից և կառավարման ինստիտուցիոնալ համակարգից ոչ վերջին հաշվով պայմանավորված է նաև կրոնական համակարգի կոնսերվատիվ, առաջընթացին ոչ նպաստավոր բնույթով: Քրիստոնեությանը բնորոշ՝ զսպվածության մշակույթի երբեմն դրական, իսկ երբեմն՝ նաև բացասական (հատկապես՝ զգացմունքների ազատ արտահայտմանը, երջանկության բացահայտ ձգտմանը խոչընդոտող խիստ բարոյախրատական նորմերի առկայության իմաստով) ազդեցությանը զուգահեռ հոգևոր տիրույթում մենք ունենք նաև պահպանողական այնպիսի ավանդույթներ և ժամանակի մեջ քարացած դոգմաներ, որոնք ակնհայտորեն արգելակ են հանդիսանում առնվազն զարգացման դինամիկայի տեսանկյունից: Այսինքն, առաջարկվող ինստիտուցիոնալ բարեփոխումների փաթեթում անհրաժեշտ է ներառել հոգևոր տիրույթի զգուշավոր, բայց հետևողական վերափոխումը, դրա՝ դեպի առաջըն-

թաց նպատակադրման իմպերատիվով: Ատենախոսության հեղինակը ճիշտ կաներ նաև առավել հստակ բացահայտեր քաղաքական, տնտեսական, սոցիալական մոդեռնիզացիոն օրակարգային ուղենիշի և առկա սոցիալ-մշակութային ինքնության պահպանության միջև գոյություն ունեցող կոշտ հակասությունը, որի հաղթահարմանն է ուղղված լինելու այդ թվում առաջարկվող կրթական համակարգի կառուցվածքային զարգացման մոդելը:

Հաջորդ կարևորագույն չափանիշը, որը մեր երկրի կոնտեքստում դիտարկվում է ատենախոսությունում, նորից Հոֆստեդեի չափագրման բանաձևին համապատասխան, դա կարճատև պլանավորման հորիզոնի առկայությունն է, որը հանդիսանում է հենց վստահության դեֆիցիտի արդյունք: Այս չափանիշին ուղեկցում է նաև ապագայի անորոշության նկատմամբ վախը, կաշկանդվածությունը, ինչը լուրջ արգելակ է երկրի իննովացիոն զարգացման համար: Գիտության և տեխնոլոգիաների ամենացայտուն, ամենաորոշիչ նվաճումներն իրականացվել են հենց անորոշության նկատմամբ կաշկանդվածության բացակայության պայմաններում, երբ հանրությունը և դրա առանձին ներկայացուցիչներն ամենայն պատրաստակամությամբ են խորասուզվում թե՛ գիտական և թե՛ պրակտիկ այնպիսի տիրույթներ, ուր մինչ այժմ չի հասել ոչ մարդկային ուղեղը, և ոչ էլ մարմինը: Այսինքն՝ Հոֆստեդեի դուրս բերած անորոշության հաղթահարման ինդեքսի (Uncertainty Avoidance Index) որոշակիորեն բարելավման անհրաժեշտություն կա Հայաստանում:

Չեմ կարող համաձայնվել ատենախոսության հեղինակի այն եզրակացության հետ, որի համաձայն Հոֆստեդեի դասակարգման տրամաբանությամբ Հայաստանը բնութագրվում է որպես առավելապես կոլեկտիվիզմի սոցիալական չափանիշին համապատասխանող երկիր: Մեր դիտարկմամբ՝ հակառակը, կոլեկտիվ նպատակադրության գործոնը մեզանում չափազանց թույլ է արտահայտված, ինչը ածանցյալ է պատմական տարաբնույթ անցյալի, պետականության քիչ թե շատ հարատև ընթացքի բացակայության, պետական ինստիտուցիոնալ կառույցների պատմական հիշողության բացակայության, օտար կայսրությունների՝ մեր հանրությանը ոչ բնորոշ սոցիալ-մշակութային և ինստիտուցիոնալ կանոնների տևական գործածման:

Ուսումնասիրվող թեմայի և արդի աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում մշակութային կոնվերգենցիայի երևույթը, այդ գործընթացի ճիշտ կառավարման անհրաժեշտությունը՝ երկրի մշակութային սուվերենության պահպանման և ամրապնդման իմպերատիվն աչքի առաջ ունենալով: Հարաբերականորեն փոքրաթիվ էթնոսների համար նշված իմպերատիվը պիտի ունենա գերակա բնույթ: Այսինքն՝ մեր երկրի կառավարման համակարգն անհրաժեշտ է զինել այնպիսի զսպող մեխանիզմներով, որոնք թույլ կտան դիմակայել մշակութային կոնվերգենցիայի՝ ամերիկյան հայտնի սոցիոլոգ Ինգլհարտ-Վելցելի դուրս բերված այն օրինաչափությանը, համաձայն որի՝ տնտեսական զարգացումն անվերապահորեն բերում է մշակութային տարբերությունների խզման:

Աշխարհաքաղաքական ներկայիս զարգացումներով պայմանավորված՝ տարածաշրջանային անխուսափելի ինտեգրման Հայաստանի հեռանկարի ենթատեքստում մշակութային հնարավոր կոնվերգենցիայի երևույթների ուսումնասիրման բացակայությունը ատենախոսական աշխատանքի լուրջ բացթողումներից է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հեղինակի եզրակացությունների ու առաջարկությունների մեջ հատկապես ուշադրության արժանի է մշակութային կոդի ձևավորմանն ու դրա՝ հանրային տիրույթում ամրագրմանն ուղղված նախադպրոցական կրթության նկատմամբ պետական հոգածության աստիճանի շեշտակի բարձրացման անհրաժեշտությունը, որի գիտակցումը պիտի բերի այդ համակարգում նախադպրոցականների ընդգրկվածության ցուցանիշի էական աճի (2023 թվականին արձանագրված 37.2%-ի դիմաց 2028 թվականի համար ծրագրավորված 70%):

Մեկ այլ կարևոր շեշտադրում՝ հասարակության մեջ հորիզոնական ցանցային համակարգերի զարգացման խթանում, տարբեր հետաքրքրությունների հիմքով քաղաքացիների միավորումների ստեղծման խթանում, տեղական ինքնակառավարման ինստիտուտի ամրացում, համատիրությունների, արհմիությունների ինստիտուցիոնալ զարգացման պետական աջակցություն: Այս քայլերը կնպաստեն ներկայումս գերակշռող սոցիալական ինդիվիդուալիզմից դեպի կոլեկտիվ նպատակադրում հասարակության փոխակերպմանը:

Հատուկ ուշադրության է արժանի հեղինակի կողմից առաջարկվող և նախաձեռնվող Ընթերցանության աջակցման ազգային համակարգի ստեղծման, երկրում գրադարանային ենթակառուցվածքի ամրապնդման և զարգացման հայեցակարգը: Կրթությանն ուղղված բյուջետային հատկացումների՝ ՀՆԱ-ում տեսակարար կշռի մինչև 4.5% (2023-ին արձանագրված 2.7%-ի փոխարեն) բարձրացմանն ու նախակրթական համակարգին հատկացվող ուշադրության և գումարների շեշտակի բարձրացմանը զուգահեռ այս նախաձեռնությունն ամփոփում է մշակութային կոդի ձևավորման ու պաշտպանության՝ հեղինակի կողմից առաջարկվող համակարգը: Մեր տեսանկյունից, սակայն, ոչ պակաս կարևոր էր առանձնացնել թանգարանային համակարգը՝ որպես ազգային մշակութային կոդի պահպանման, վերաստեղծման և վերարտադրության համալիր կլաստեր:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որպես ընդհանուր բնույթի դիտողություն՝ կնշենք ատենախոսությունում առկա հետխորհրդային պետությունների՝ որպես «անցումային տնտեսություններ» բնութագրումը: Անկախացումից արդեն երեսունհինգ տարվա ընթացքի հետագիծ ունեցող երկրները (ներառյալ Հայաստանը) այլևս չեն կարող սահմանվել որպես անցումային տնտեսություններ: Դա առավելապես ձեռնտու է ձախողված կառավարիչներին, որոնք հենց տնտեսության իբրև թե անցումային բնույթով են պայմանավորում արդեն մեր օրերում արձանագրված ձախողումները:

Հայ մշակութային կոդին հակոտնյա է նաև ատենախոսությունում հանդիպած «ամուսնական շուկա»՝ օրիգինալում “брачный рынок” ձևակերպումը: Սա, հավանաբար, ռուսերեն հրատարակված հետազոտություններում առկա ձևակերպման մեխանիկական տեղափոխում է հայկական ընկալման դաշտ, ինչը ընդունելի չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է, որտեղ դրված և փորձ է արված լուծել տեսական և գործնական արժեքավոր արդիական խնդիրներ:

Ատենախոսը հանդես է բերել մասնագիտական և վերլուծական խորը գիտելիքներ, ստացված արդյունքները տեսական, մեթոդական և գործնական կարևոր նշանակություն ունեն:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի կողմից հրատարակված 9 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսում-նա-սիրության բովանդակությանը և ներառում է աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Բոլոր էական առումներով Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է

Ը.00.02 — «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ամփոփելով սույն Կարծիքի ներկայացումը՝ ընդգծենք, որ Արմեն Մարտիրոսյանի ատենախոսությունը համապատասխանում է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացվող ամենախիստ պահանջներին, ուսումնասիրվել և վերլուծվել է հետազոտման առարկային վերաբերող մասնագիտական գրականության հսկայածավալ նյութ, պարունակում է զգալի չափով գիտական նորույթ և խիստ արդիական է ներկայացված եզրակացությունների և առաջարկությունների տեսքով:

Ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության դոկտոր,
Պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ, անդամ
Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի
Արտասահմանյան անդամ

ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ

19.06.2026թ.